

*Իրական Ղրոնորի*

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ  
ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ  
ՀԵՌՈՒՄՏԱԲԱՆԱԿԵԾԵՐ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Երեւան 2001

Ինտերնյուս

Շնորհակալություն ենք հայտնում  
Սիացյան Նահանգների Միջազգային Չառգացման Գործակալությանը  
ֆինանսական աջակցության համար:

## 1. Հանձնարարվող տեխնիկայի ցանկ

Ուղիղ հեռուստաբանավեճեր կազմակերպելու համար անհրաժեշտ է հետևյալ տեխնիկան.

1. 2 - 3 խցիկ՝ Svhs ձևաչափի

2. 2 - 3 հեռակալ:

3. 1 տեսահամադրիչ, որն ուղիղ եթերում մոնտաժելու հնարավորություն է տալիս:

4. 1 ձայնահամադրիչ՝ մտնող մի քանի ձայնաազդանշանները (միկրոֆոնի, հեռախոսագծի, եթեր արձակվող դրվագի ձայնը) համադրելու համար:

5. 3 - 4 տեսամոնիտոր կամ հեռուստացույց: Դրանց քանակը պայմանավորված է տեսախցիկների քանակով. ամեն մի խցիկի համար մեկ մոնիտոր (հեռուստացույց)՝ նկարահանման գործընթացը վերահսկելու համար, և մեկ եթերային մոնիտոր (**ON AIR**)՝ եթեր տրվող ազդանշանը վերահսկելու համար:

6. Հեռախոսային հարմարեցված սարք, որի միջոցով իրականացվում է հեռախոսազանգերի եթեր արձակումը:

7. Svhs ձևաչափի երկու տեսաձայնագրիչ: Մեկն անհրաժեշտ է դրվագը եթեր արձակելու համար, իսկ մյուսը՝ եթեր արձակված ծրագիրը գրելու:

8. Կոճկառային ("петличный") միկրոֆոն՝ ըստ մասնակիցների թվի: Հեռուստաբանավեճերի համար ձայնը լավագույն որակի հասցնելու նպատակով՝ հանձնարարվում է օգտագործել կոճկառային միկրոֆոն:

9. Շարժական միկրոֆոն ռեժիսորի համար: Թույլատրելի է օգտագործել ցանկացած մոդելի և որակի միկրոֆոն:

10. Ձայնի բաշխիչ-ուժեղարար: Դրանով ռեժիսորը կապ է հաստատում օպերատորի և հաղորդավարի հետ:

11. Բարձր որակի շարժական միկրոֆոն, որը հաղորդավարը պետք է բռնի ձեռքին՝ ստուդիայում ազատ տեղաշարժվելու համար:

12. Համակարգիչ՝ հաղորդման ընթացքում լուսագրերը դնելու համար: Ցանկալի և մատչելի է (գնի առումով) օգտագործել AV Master սարքը: Լուսագրերն անհրաժեշտ է պատրաստել նախօրոք և հաղորդումը սկսելուց առաջ մի քանի անգամ ստուգել:

13. Չայնային մալուխ՝ միկրոֆոնից ստացված ազդանշանը համադրիչին հասցնելու համար: Պրոֆեսիոնալ միկրոֆոն օգտագործելու դեպքում կպահանջվեն մալուխներ Canon-ի անջատասարքով: Մալուխի հանձնարարվող երկարությունը մոտ 10 մետր է:

14. Տեսաազդանշանն ընդունելու համար հանձնարարվում է օգտագործել Svideo մալուխը, ինչը Svhs ձևաչափում կապահովի լավագույն որակ: Վերջինիս ցանկալի երկարությունը 10 մետր է:

15. Տեսաազդանշանը մոնիտորին (հեռուստացույցին) հասցնելու համար հանձնարարվում է օգտագործել RCA տիպի մալուխ: Այդ ելքի և մալուխի օգտագործումը պահանջվում է, երբ մոնիտորի փոխարեն օգտագործում ենք հեռուստացույց, որը չունի Svideo in out (ազդանշանի մուտք և ելք): Ցանկալի է, որ RCA մալուխի երկարությունը լինի 10 մետր:

16. Որակի պահպանման նպատակով՝ տեսաձայնագրիչից համադրիչ և համադրիչից տեսաձայնագրիչ (եթեր արձակվող ծրագիրը գրելու համար) ազդանշանի ներածումը ցանկալի է կատարել Svideo մալուխով:

17. Սանրանրբին ականջակալներ՝ բանավեճի մասնակիցների և հաղորդավարի համար: Թույլատրելի է էժանագին մոդելների օգտագործումը: Չայնի հետադարձից խուսափելու համար հանձնարարվում է, որ բանավեճի մասնակիցները և հաղորդավարն ականջակալների միջոցով լսեն եթեր արձակվող դրվագի ձայնը: Միացման մալուխի հանձնարարվող երկարությունը 12 - 15 մետր է:

18. Ականջակալներ օպերատորի համար: Կարող են օգտագործվել ցանկացած մոդելի և որակի ականջակալներ: Նրանց միջոցով օպերատորները լսում են ռեժիսորի ցուցումները: Միացման մալուխի հանձնարարվող երկարությունը 10 - 12 մետր է:

19. Չայնաուժեղարար և ձայնամոնիտոր կամ ականջակալներ ռեժիսորի համար: Գերադասելի է օգտագործել ձայնաուժեղարար և ձայնամոնիտոր, որովհետև ականջակալների դեպքում ռեժիսորը չի լսի (կամ լսելու համար նրան կպահանջվի մի քանի փոխարկում, ինչը կխանգարի նրա աշխատանքին) հնչյունային ռեժիսորի և պատրաստի դրվագի ձայնը:

20. Ուղիղ եթերի սկսվելուց առաջ տեսահամադրիչի պատյանի վրա ցանկալի է փակցնել հետևյալ ինֆորմացիան. խցիկների համարները կամ օպերատորների անունները, իսկ ձայնահամադրիչի պատյանի վրա՝ հաղորդման մասնակիցների անունները կամ հերթական համարները, հեռուստացույցի (մոնիտորի) վրա՝ խցիկի համարը կամ օպերատորի անունը: Տեսահամադրիչից դուրս ելնող կամ եթերից ստացվող ազդանշանը վերահսկող հեռուստացույցի (մոնիտորի) վրա պետք է նշվի՝ **եթեր** (ON AIR): Գրող ձայնագրիչի պատյանի վրա պետք է նշել նրա գործառույթը և մակագրել՝ «գրող» կամ «հիմնական» (Master), իսկ վերականգնողի վրա՝ «վերականգնող» կամ «աղբյուր» (Plyer կամ Sours): Այդ ամենն անհրաժեշտ է ռեժիսորի աշխատանքը հեշտացնելու համար:

## 2. Հանձնարարականներ ռեժիսորի համար

### *I. Տեխնիկական խնդիրներին առնչվող հանձնարարականներ*

Հաղորդումը սկսելուց առաջ անհրաժեշտ է ստուգել տեխնիկայի սարքինությունը:

Ուղիղ եթերի ժամանակ խցիկները պետք է սնվեն էլեկտրացանցից, ինչը թույլ կտա, կուտակիչի լիցքաթափման դեպքում, խուսափել խցիկի անջատումից:

Հաղորդումը սկսելուց առաջ պետք է ստուգել խցիկի օպտիկան (կիզակետումը, դիաֆրագմայի աշխատանքը) և «զումը»:

Հանձնարարվում է խցիկների մեջ տեղավորել ժապավենատուփը և զուգահեռաբար իրականացնել տեսագրումը, ինչը թույլ կտա հետագայում, հաղորդումը կրկնելու դեպքում, շտկելու հնարավոր խտտանք:

Հաղորդումը սկսելուց առաջ անհրաժեշտ է ստուգել կապը ռեժիսորի, հաղորդավարի և օպերատորի միջև: Պետք է համոզվել, որ հաղորդման մասնակիցները կկարողանան լսել եթեր արձակված դրվագները:

Ռեժիսորի աշխատանքը պետք է կարգավորվի այնպես, որ եթերի ընթացքում նա հարկադրված չլինի ավելորդ շարժումներ անել կամ դուրս գնալ որևէ տեղ: Տեսահամադրիչը հանձնարարվում է տեղավորել սեղանի վրա, ռեժիսորի առջև, իսկ տեսաձայնագրիչները՝ մեծ մասամբ ձախից, այնպես, որ դյուրին լինի դրանցով աշխատելը:

Հեռուստացույցները (մոնիտորները) ցանկալի է տեղավորել բարձր՝ մոտավորապես 40 - 50 սանտիմետր բարձրության վրա: Դա ռեժիսորի համար ավելի դյուրին կդարձնի խցիկների վերահսկումը և տեսահամադրիչի վրա աշխատելը:

Ռեժիսորի և օպերատորի միջև կապ հաստատելու համար ռեժիսորական սեղանին անհրաժեշտ է տեղավորել շարժական միկրոֆոն: Այն հարկավոր է տեղադրել ռեժիսորին հնարավորին չափ մոտիկ, որպեսզի օպերատորը կարողանա նորմալ լսել նրա ձայնը, և բացառվեն ավելորդ շարժումները եթերի ժամանակ:

Պետք է նախօրոք ստուգել եթեր արձակվող դրվագները, կարգավորել ձայնի մակարդակները՝ տեղակայելով սկզբնական աստիճանների վրա և դասավորելով ըստ հաջորդականության:

Եթերի սկսվելուց առաջ ցանկալի է կազմել հաղորդման ծրագիրը, ուր կնշվի հետևյալը. հաղորդավարի հետ նախապես համաձայնեցված հարցերի հերթականությունը և այդ հարցերին պատասխանելու հավանական ժամանակը, դրվագների եթեր արձակման տեղը և հաջորդականությունը, գովազդաշարի տեղը և գովազդի տևողությունը, հեռախոսային միացումների

տեղերը և տևողությունը: Նշված ծրագիրը ցանկալի է տեղավորել ռեժիսորի տեսադաշտում:

Պարտադիր է մասնակիցների անունների և նրանց կոչումների, տիտղոսների ստույգ իմացությունը: Այդ տվյալները հանձնարարվում է գրել ցուցակում և հաղորդման ծրագրի հետ մեկտեղ տեղավորել ռեժիսորի և նրա ընթերակայի (ասիստենտի) տեսադաշտում:

Ուղիղ եթերի սկսվելուց առաջ, ռեժիսորի ղեկավարությամբ, պետք է իրականացվի խցիկների կարգավորումը (բալանսը)՝ ըստ սպիտակ գույնի: Դա անհրաժեշտ է, որպեսզի բոլոր խցիկների պատկերումը լինի միատեսակ (միատեսակ գույներ): Եթե որևիցե պատճառով չի հաջողվել հաստատել հավասարակշռություն, խցիկից խցիկ անցնելու ժամանակ ակնահայտորեն կերևա տարբերությունը պատկերների միջև (միևնույն օբյեկտը կամ ենթաօբյեկտը կունենան տարբեր գույներ), ինչը անհարմարություն կպատճառի և կգրգռի ակնդիրներին:

Լուսավորման սարքը տեղադրելիս պետք է հատուկ ուշադրություն դարձնել էլեկտրացանցի սարքինությանը: Անթույլատրելի է հաղորդալարերի և գործարկիչների գերբեռնումը սպառողների մեծաքանակությամբ:

Անթույլատրելի է ուժային և ձայնային ազդանշանի մալուխների դասավորումը միմյանց վրա, դրանց միահյուսումը: Նման դեպքում ձայնի մեջ առաջանում է «սուլոցի» նմանվող աղմուկ (ֆոն): Հաղորդալարերն իրարից հեռացնելու դեպքում աղմուկը կվերանա:

Հանպատրաստից սարքած «ստուդիայում» չի հանձնարարվում սպիտակ կամ բաց գույների օգտագործումը, որովհետև անհնարին կլինի լուսակայանան հաստատումը: Դրա պատճառը անդրադարձման գործակիցների մեծ տարբերությունն է: Սպիտակ գույնի անդրադարձման գործակիցը մի քանի անգամ գերազանցում է դեմքի մաշկի գույնի անդրադարձման գործակիցը, հետևապես, ցանկացած տիպի լուսավորման ժամանակ, մարդու դեմքը լուսավորված կլինի ֆոնից նվազ:

Լուսավորման սարքի վրա անհրաժեշտ է ամրացնել պաշտպանացանց, որը, լամպի պայթյունի դեպքում, հաղորդման մասնակիցներին կպաշտպանի վնասվածքներից:

Եթե «ստուդիան» փոքր է, ծագում է ֆոնի վրա ստվերների առաջացման վտանգ: Ստվերներից ազատվելու ամենարդյունավետ միջոցը լուսավորման սարքը վերև բարձրացնելն է կամ հաղորդման մասնակիցներին ֆոնից հեռացնելը: Աղոտ ստվերներից հնարավոր է ազատվել ֆոնի լուսավորմամբ:

Հանձնարարվում է «ստուդիայում» տեղավորել երանգային լուսավորում, ինչը կնվազեցնի ստվերների հետ կապված խնդիրները: Կան մի քանի տարբերակներ, թե ինչպես կարելի է երանգային լուսավորում ստանալ՝ դրա համար չհատկացված լուսավորման սարքերով: Այն է՝

*1. Լուսավորման սարքի լուսահոսքն ուղղել սպիտակ գույնի առաստաղին:*

*2. Լուսավորման սարքի լուսահոսքն ուղղել սպիտակ գույնի մեծ չափի արտացոլիչի (արտացոլիչների) վրա, որը պետք է տեղադրել լուսահոսքի նկատմամբ 45 աստիճանի անկյան տակ:*

*3. Օգտագործել լուսահոսքի մեղմացման գործիքները: Օրինակ, «արկագուլը»՝ չեզոք, մոխրագույն գտիչը:*

*4. Հնարավոր է օգտագործել արծաթագույն կամ ոսկեգույն անդրադարձման գործիքները, որոնց վրա պետք է ուղղել լուսահոսքը: Պետք է հաշվի առնել նաև այն, որ անդրադարձված լույսը կլիմի արծաթագույն կամ ոսկեգույն:*

Եթե «ստուդիան» փոքր է, սակայն ունի բարձր առաստաղ, ապա լուսավորման սարքը կարելի է ամրացնել առաստաղի երկաթե կառուցվածքին: Այսպիսի լուսավորման դեպքում ստվերն ընկնում է խոսողի դեմքի և վզի վրա: Որքան բարձր տեղադրված լինեն լուսավորման սարքերը, այնքան ավելի մեծ կլիմի ստվերահատվածի մակերեսը: Լուսավորման սարքի հանձնարարվող թեքության անկյունը կազմում է 30-45 աստիճան:

## *II. Ստեղծագործական խնդիրներին առնչվող հանձնարարականներ*

*Ուղիղ եթերում որակյալ հաղորդման պատրաստումը շատ բարդ և պատասխանատու գործընթաց է, որը ռեժիսորից պահանջում է գիտելիքներ և փորձ: Հեռուստատեսության մեջ ամենաաշխատատար, բարդ և պատասխանատու մասնագիտությունն ուղիղ եթերում աշխատող ռեժիսորի մասնագիտությունն է: Այդ մասնագիտության մարդիկ շատ երկար ժամանակ ուսումնասիրում են տեսությունը և վարժվում գործնականորեն: Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել լավ ռեակցիա, մի քանի տեսակի լրատվություն միաժամանակ և լիարժեք ընկալելու և դրանց արձագանքելու ունակություն:*

Ուղիղ եթերում աշխատելու բարդությունը կայանում է նրանում, որ ռեժիսորը մտածելու ժամանակ չունի: Նա պետք է որոշումներն ընդունի շատ արագ: Հաղորդման ընթացքում թեկուզ մեկ սխալ որոշում կայացնելու դեպքում եթեր է արձակվում խոտանված հաղորդում, որը շտկել հնարավոր չէ:

*Խոտանի առաջացման վտանգը նվազեցնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք խորհուրդներ, որոնք ուղիղ եթերի ժամանակ ձեռք են բերում օրենքի ուժ:*

1. Չպետք է մոռանալ պատկերի՝ ըստ խոշորության բաժանումը և դրա օգտագործումը:

*1. Մանրամասներ*

*2. Խոշոր պլան*

*3. 1-ին միջին պլան*

*4. 2-րդ միջին պլան*

*5. Ընդհանուր պլան*

*6. Հետին պլան*

Մոնտաժի «օրենքներից» ելնելով՝ պլանից պլան անցնելն անհրաժեշտ է մեկի բացթողումով: Օրինակ, խոշոր պլանից պետք է անցնել 2-րդ միջին պլանի, 1-ին միջինից՝ ընդհանուրի և այլն: Բացառություն են կազմում մանրամասնից՝ խոշորին, և ընդհանուրից՝ հետին պլանի անցնելը:

Նպատակահարմար չեն նաև հետևյալ անցումները. մանրամասնից՝ ընդհանուրի, կամ խոշորից՝ հետինի: Այդպիսի անցումների դեպքում պլանների միջև տարբերությունն այնքան մեծ է, որ դիտողի մոտ կորչում է երևույթի (գործողության) զարգացման ամբողջականության զգացումը: Օրինակ, մանրամասն՝ մարդու աչքը, ընդհանուր՝ մարդու ընդհանուր պլանը: Դիտողը չի կարողանա առաջին կադրի մեջ տեսած աչքը զուգորդել երկրորդ կադրի մեջ հայտնված մարդու մարմնի հետ: Դիտողը տվյալ մանրամասնից չի ստացել բավարար տեսողական ինֆորմացիա, քանի որ կադրի շրջանակներում նա տեսել է ընդամենը աչք և ուրիշ ոչինչ, իսկ ընդհանուր պլանով նա տեսնում է շատ անժանոթ մանրամասներ, որոնք ոչ մի կերպ կապված չեն իր տեսած աչքի հետ:

Միևնույն մեծության երկու պլանի կցումը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ 1-ին կադրի կոմպոզիցիայի կենտրոնը թեքված է, օրինակ, աջ կողմ, իսկ 2-րդինը՝ ձախ: Օրինակ, երկու մարդու զրույցը: Եթե 1-ին կադրում մարդը նայում է աջից ձախ, այնժամ, ելնելով հարմարավետ մոնտաժային անցման սկզբունքից, 2-րդ կադրի մեջ մյուս մարդը պետք է նայի ձախից աջ: Այսպիսի անցումը երկխոսության տպավորություն է ստեղծում նույնիսկ այն դեպքում, երբ այդ երկու կադրերը նկարահանված են տարբեր ժամանակներում:

*Ուղիղ եթերի ժամանակ պլանները հանձնարարվում է փոխել վերը նշված հաջորդականությամբ, որպեսզի դիտողին առավելագույն տեղեկատվություն հասնի ընթացող գործողության վերաբերյալ:*

Ուղիղ եթերում աշխատանքի ժամանակ մեծ նշանակություն է տրվում փոխգործողության երևակայական գծի անցկացմանը: Երկու կամ ավելի մարդկանց զրույցը նկարահանելիս՝ մտովի հարկավոր է անկացնել փոխգործողության երևակայական գիծ: Եթե երկու մարդ կանգնած են իրար դիմաց և նայում են միմյանց, ապա փոխգործողության երևակայական գիծը պետք անցկացնել նրանց դեմքերի միջև:

Եթե նկարահանումը սկսում ենք երևակայական գծի մեկ կողմում, ապա բոլոր կադրերը պետք է նկարահանենք երևակայական գծի նույն կողմում: Պահպանելով այս կանոնը՝ կխուսափենք էկրանի վրա մասնակիցների՝ մեկ անկյունից մյուսը «ցատկելուց»:

Երբ մասնակիցների թիվը երկուսից ավելի է, դարձյալ պետք է օգտագործել այդ մեթոդը՝ մասնակիցների միջև փոխգործողության երևակայական գիծ անցկացնելը:

Որպեսզի մարդկանց նկարահանելիս փոխգործողության երևակայական գիծը չխախտվի, խորհուրդ չի տրվում նկարահանել մասնակիցների թիկունքից:



Հանձնարարվում է խցիկները տեղավորել մասնակիցների աչքերի բարձրության վրա:

Ուղիղ եթերի ժամանակ մեծ նշանակություն ունի այն, որ ռեժիսորը օպերատորին տա կարճ և հստակ առաջադրանքներ: Դրա համար անհրաժեշտ է այն տերմինների կամ «համաձայնեցված բառերի» իմացությունը, որոնք եթերի ընթացքում կօգնեն շփվելու միմյանց հետ:

Օպերատորները ռեժիսորի ցուցումները պետք է հասկանան կես խոսքից: Օրինակ, «գում» խոշորից ընդհանուրի» կամ «միջին պլանով», «համայնապատկեր՝ աջից ձախ» և այլն: Ցուցում ստանալուց հետո օպերատորը չպետք է ունենա ռեժիսորին հարց տալու պահանջ. եթերի ընթացքում դրա համար ժամանակ չի լինի: Փոխադարձ կապ հաստատելու համար անհրաժեշտ են հեռահաղորդման հատուկ սարքեր, որոնք շատ թանկ են և փոքր հեռուստաընկերության համար դրանք ձեռք բերելն իմաստ չունի: Ուստի պետք է օգտագործել միակողմ կապի էժանագին սարքեր, որոնք ռեժիսորից պահանջում են ցուցումների մեծագույն պարզություն:

Ըստ տեխնիկական հաշվարկի՝ յուրաքանչյուր տեսախցիկ ունի իր մոնիտորը, ինչը ռեժիսորին հնարավորություն է տալիս անմիջականորեն մասնակցել կադրի նախապատրաստմանը (կոմպոզիցիա, պլան և բովանդակություն): Բարձրակարգ ռեժիսորն ինքն է օպերատորին հուշում կոմպոզիցիայի և խցիկի շարժման ուղղությունը: Բայց դա չի նշանակում, թե օպերատորը պետք է միայն մեխանիկական աշխատանք կատարի: Ցուցումներ ստանալուց հետո օպերատորն ինքն է իրականացնում կադրի ստեղծման գործը:

Կադրի կառուցման ավարտից հետո ռեժիսորը պետք է տեղեկացնի օպերատորին, որ վերջինիս խցիկը սկսում է աշխատել եթերում: Այս ընթացակարգն անհրաժեշտ է օպերատորին նախապատրաստելու համար: Միայն նախազգուշացումից հետո ռեժիսորը պետք է անցնի նշված խցիկին:

Իրար հետևից երկու համայնապատկերի կցումը հանձնարարելի չէ:

Խորհուրդ չի տրվում նաև իրար հետևից *Սáí»óÙ<sup>3</sup>Ý* («zoom in») և *Ñ»é<sup>3</sup>óÙ<sup>3</sup>Ý* («zoom out») կցումը:

Եթե կոմպոզիցիայի կենտրոնը թեքված է միևնույն կողմը, ապա խորհուրդ չի տրվում իրար հետևից մի քանի կցում կատարել:

Խոշոր պլան նկարահանելիս անպայման պետք է տեղ նախատեսել լուսագրերի համար: Հակառակ դեպքում՝ լուսագրերը կհայտնվեն խոսողի դեմքին, ինչը չափազանց վատ տպավորություն կթողնի:

Տեսահամադրիչի վահանակներն ունեն խցիկից մեկ այլ խցիկի կամ տեսաձայնագրիչի անցնելու մի քանի ռեժիմներ.

### *1. Անցում «համադրումներով»*

2. Անցում «արտամղման» էֆեկտով

3. Անցում «հատումով» կամ անցում առանց որևէ էֆեկտի

4. Անցում «մթնեցումով»:

Համադրիչների էժանագին վահանակներում նախատեսված չէ սինքրոնացումը՝ մի քանի սարքի համաժամանակեցման հնարավորությունը: Այդ պատճառով, «հատումով» անցումն առանց խտանի՝ անհնարին է: Տվյալ դեպքում հանձնարարվում է օգտագործել միայն համադրումներով կատարվող անցումը: Նաև հնարավոր է «հատումով» անցման նմանակում: Դրա համար անհրաժեշտ է միայն արագացնել համադրման ընթացքը:

Ուղիղ եթերում հաղորդումը ցանկալի է սկսել մասնակիցների և ստուդիայի (եթե հաղորդումն անցնում է ստուդիայում) ընդհանուր պլանով (հասցեագրված պլան): Դրանով հեռուստադիտողին հնարավորություն է տրվում գնահատելու և ուսումնասիրելու վայրը և իրադրությունը, հստակ իմանալու մասնակիցների թիվը և նրանց տեղադրումը միմյանց նկատմամբ, ինչը հետագայում, խոշոր և միջին պլաններով աշխատելիս, հեռուստադիտողներին կօգնի կողմնորոշվելու իրադրության մեջ (ով որտեղ է նստած, ում հետ է զրուցում, և ով ինչպես է արձագանքում):

Երկխոսության ժամանակ հանձնարարվում է մասնակիցներին նկարահանել խոշոր կամ 1-ին միջին պլանով: Մասնակիցներին ներկայացնելուց հետո (1-ին միջին պլանով) կարելի է անցնել խոշոր պլանի, ինչն ավելացնում է լարվածությունը և հուզականությունը: Լարված բանավեճի հուզականությունը և դինամիզմը հաղորդելու համար հանձնարարվում է հաճախակի արագորեն փոխել խոշոր պլանները:

Ուղիղ եթերում աշխատելը ռեժիսորից պահանջում է առավելագույն ուշադրություն: Սխալի և խտանի դեպքում անհրաժեշտ է արագորեն արձագանքել և գտնել իրավիճակը շտկելու ելք: Եթե հաջողվի խտանը վերացնել 2 վայրկյանից ավելի շուտ, այդժամ հեռուստադիտողը չի հասցնի ըմբռնել, որ տեղի է ունեցել խտան:

Եթերի ընթացքում ուշադրության կենտրոնում (կադրում) պետք է լինի տվյալ պահին խոսող անձը, սակայն ռեժիսորի ուշադրությունից չպետք է վրիպեն ունկնդրողների հետաքրքիր և տպավորիչ արձագանքները և գնահատականները: Հաղորդման ռեժիսորն ընթացքում պետք է լիովին տիրապետի իրադրությանը և այնպես աշխատի, որպեսզի հեռուստադիտողներին օգնի առանց մեկնաբանության ընկալելու զրուցողների փոխհարաբերությունները:

*Թիվ 1 և 2 հավելվածներում բերված են հանպատրաստից ստեղծված ստուդիայի և խցիկների տեղադրման սկզբունքային սխեմաները: Այդ հավելվածներում բերված են արդեն փորձված, պարզ և բավականին արդյունավետ սխեմաները:*

*Թիվ 3 հավելվածում տրված է «ստուդիայի» տեխնիկական սխեման, ըստ որի, դրվագը ուղիղ եթեր արձակելու համար կարող ենք օգտագործել երեք խցիկ և վերականգնող տեսաձայնագրիչ:*

### 3. Հանձնարարականներ հնչյունային ռեժիսորի համար

#### *III. Տեխնիկական խնդիրներին առնչվող հանձնարարականներ*

Հաղորդումը սկսելուց առաջ անպայման պետք է առանձին-առանձին ստուգվեն բոլոր միկրոֆոնները: Կոճկառային միկրոֆոններով աշխատելիս՝ առաջին հերթին պետք է ստուգվեն կուտակիչները: Եթե միկրոֆոնների կուտակիչները լիցքավորման կարիք ունեն, նման դեպքում միկրոֆոնից ստացվող ազդանշանը կլինի ցածր և կուղեկցվի աղմուկով: Այդ հայտանիշները հատուկ են բոլոր կոճկառային միկրոֆոններին:

Նախքան հաղորդումը անպայման հարկավոր է առանձին-առանձին ստուգել բոլոր մալուխները: Պրոբլեմներ կարող են ծագել նաև գործարկիչների հպակների (շտեկերների) կամ էկրանավորման վնասվածքի դեպքում:

Ձայնահամադրիչի վահանակին միկրոֆոնի միացումը ցանկալի է իրականացնել հաջորդականորեն: Դրա հետ մեկտեղ, մեկ անգամ ևս պետք է ստուգել միկրոֆոնը, մալուխը և համադրիչի վահանակի միացման կապուղին:

Համադրիչի վահանակի կապուղու վրա գոյություն ունեցող էկվալայզերներն անպայման պետք է լինեն 0-ի վրա (առանց ուժեղացման): Նրանց օգտագործումը հանձնարարվում է այն ժամանակ, երբ ձայներանգի շտկումն անհրաժեշտ է:

Եթերի սկսվելուց առաջ անհրաժեշտ է համապատասխանեցնել վերարտադրող տեսաձայնագրիչի, համադրիչի վահանակի և գրող տեսաձայնագրիչի ձայնային ազդանշանների մակարդակները: Դրա համար գրող տեսաձայնագրիչի մեջ պետք է դնել տեսագրումը՝ ձայնի բարձրության աստիճանի 100 տոկոսի և 14ից ձայներանգի ազդանշանով: Համադրիչի վահանակի վրա ձայնի մակարդակը կարգավորելու համար՝ մուտքի ազդանշանի բարձրության աստիճանը պետք է դնել 100 տոկոսի շրջանակներում: Նույն գործողությունները պետք է կատարել նաև գրող տեսաձայնագրիչների վրա: Դրանից հետո բոլոր սարքերի ձայնի մակարդակները կլինեն փոխհամաձայնեցված:

Ուղիղ եթերում ձայնահամադրումը շատ բարդ և աշխատատար գործ է, որը ռեժիսորից պահանջում է լավ լսողություն, ռեակցիա և մի քանի գործողությունների միաժամանակյա կատարում: Շատ դժվար է միաժամանակ կարգավորել 8-10 միկրոֆոնի, ստացվող հեռախոսազանգերի, եթերում հաղորդման ձայնի ընդհանուր աստիճանի և եթեր գնացող դրվագի ձայների մակարդակները:

Հաղորդման ընթացքում ձայնի առավելագույն աստիճանը (100 տոկոս) պետք է ունենա խոսող անձի միկրոֆոնը, իսկ մյուս մասնակիցների միկրոֆոնների ձայնի աստիճանը պետք է կազմի մոտավորապես 50 տոկոս: Դա պայմանավորված է նրանով, որ հարկ եղած դեպքում ձայնային ազդանշանի

մակարդակի բարձրացումը 50-ից 100-տոկոսի՝ կատարվում է ավելի արագ և առանց բարդությունների: Բացի այդ, եթե ռեժիսորը չհասցնի արձագանքել և փոփոխել ձայնի մակարդակը, ապա այս դեպքում էլ խոսողի առաջին խոսքերը չեն վրիպի հեռուստադիտողների ուշադրությունից:

«Ստուդիայում» ձայնը խորհուրդ է տրվում լսել ականջակալներով: Եթե օգտագործում ենք ուժեղարարներ և ձայնամոնիտորներ, ապա միկրոֆոններին ու ձայնամոնիտորներին մոտենալու կամ ձայնի մակարդակը բարձրացնելու դեպքում, առաջանում է ձայների «խճճման» վտանգ: Անցանկալի ձայնի ներգործությունից խուսափելու համար հանձնարարվում է օգտագործել ականջակալներ՝ ցանկացած որակի:

Ցանկալի չէ միկրոֆոնների տեղավորումը էլեկտրալամպերի մոտ: Նման դեպքերում առաջանում է ձայնի վրա աղմուկի («սուլոցի») վերադրման վտանգը:

Չեռախոսային հարմարեցված սարքը (հիբրիդը) թույլ է տալիս հեռախոսազանգերը հնչեցնել ուղիղ եթերում: Այդ սարքին միանում են հեռախոսակալը, հեռախոսը, համադրիչի վահանակից դուրս եկող ազդանշանը և մալուխը, որով ազդանշանը հեռախոսային հիբրիդից կմտնի համադրիչի վահանակ: Չեռախոսային հիբրիդի համար համադրիչի վահանակում անհրաժեշտ է թողնել առանձին կապուղի, ինչը կընձեռի մուտքի ազդանշանի վրա ներգործելու հնարավորություն: Չամադրիչի վահանակով հնարավոր է հեռախոսազանգերի ձայնի մակարդակի և որակի կարգավորումը:

#### *IV. Ստեղծագործական խնդիրներին առնչվող հանձնարարականներ*

Շատ դժվար է ասել, թե որ մասնագիտությունն է ավելի բարդ՝ ռեժիսորի<sup>o</sup>, թե<sup>o</sup> հնչյունային ռեժիսորի: Երկուսն էլ պահանջում են կրթություն, ծաշակ, լավ ռեակցիա, պրոբլեմային իրավիճակներում հստակ որոշում ընդունելու ունակություն և որ ամենակարևորն է՝ գործի նկատմամբ ստեղծագործական մոտեցում:

Եթե «նկարահանման» ռեժիսորից պահանջվում է աշխատանք 2-3 խցիկի և ամենաշատը՝ 2 տեսաձայնագրիչի հետ, ապա հնչյունային ռեժիսորն այդ ժամանակ պետք է աշխատի 6-8 միկրոֆոնի և 2 տեսաձայնագրիչի ձայների հետ: Այդ աշխատանքների միջև բարդությունների տարբերությունն ակնհայտ է:

*Հնչյունային ռեժիսորը պետք է վերահսկի ձայնային ազդանշանի մակարդակը, որակը, ձայներանգային կայունությունը, դրվագը եթեր արձակելու ժամանակ պետք է համապատասխանեցնի մի քանի կապուղիների ձայնային մակարդակները, իրականացնի խոսող անձանց միկրոֆոնների ձայնի մակարդակների համադրում, որպեսզի հեռուստադիտողի համար պարզ լինի, թե ով է խոսում:*

Ուղիղ եթերի ժամանակ գլխավորը ռեժիսորի և հնչյունային ռեժիսորի համաձայնեցված աշխատանքն է: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի հասնել հաղորդման առավելագույն տեխնիկական և ստեղծագործական որակի: Հասարակ օրինակ. եթե ռեժիսորը կադրում մեկ անձի է ցուցադրում խոշոր պլանով, իսկ հնչյունային ռեժիսորը նույն պահին ձայնի մակարդակը բարձրացրել է այլ անձի համար, որը չի խոսում, սակայն հագում կամ որել է այլ կարգի աղմուկ է առաջացնում, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչ տեսարանի վկա կդառնա հեռուստադիտողը: Հատկապես զավեշտական իրադրություն կստեղծվի, եթե այն պահին, երբ հաղորդման մասնակիցները գրուցում են որել է լուրջ թեմայի շուրջ, հանկարծ լսելի լինի ինչ-որ աղմուկ կամ կողմնակի անձանց անկապ խոսակցություն: Այդպիսի «կատակից» հետո դիտողն անպայման կկորցնի հաղորդումը մինչև վերջ նայելու որևէ ցանկություն:

Հնչյունային ռեժիսորը պետք է ուշադրություն դարձնի այն բանի վրա, որ գրուցողների միկրոֆոնների ձայնի մակարդակների միջև տարբերությունը մեծ չլինի: Հակառակ դեպքում, եթերում ամեն մի նոր խոսողի ներգրավումը ձայնի մեջ կառաջացնի «ցատկ», ինչը կգրգռի դիտողին:


*Վերը բերված հանձնարարականներն ընդամենը մի մասն են այն մեծածավալ ինֆորմացիայի, որին պետք է տիրապետեն ռեժիսորը և հնչյունային ռեժիսորը՝ ուղիղ եթերում բարձրորակ հեռուստահաղորդում ստեղծելու համար:*

*Թիվ 4 հավելվածում բերված է ուղիղ եթերի «ստուդիայի» ձայնային մասի հիմնական սխեման՝ ձայնահամադրիչի վահանակով, հեռախոսային հիբրիդով, միկրոֆոնով, մասնակիցների համար ականջակալներով և գրող-վերարտադրող տեսաձայնագրիչով:*

*Թիվ 5 հավելվածում եթերային «ստուդիայի» ձայնային մասի հիմնական սխեման է (կապը ռեժիսորի և օպերատորի միջև), ձայնի ուժեղարար-բաշխիչով, ռեժիսորի միկրոֆոնով և օպերատորի ականջակալներով:*


# Սխեմա թիվ 1

Հաղորդավար




## Մխենա թիվ 2

1 խցիկը տեղադրումը ուղղաձիգ հարթությունում







### Սխեմա թիվ 3



## Միտենա թիվ 4



# Միտեմա թիվ 5



Ռեժիսորի միկրոֆոնը՝ օպերատորի հետ կապ հաստատելու համար

*Իրակլի Ղլոնտի*

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ  
ՈՒՂԻՂ ԵԹԵՐՈՒՄ  
ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐ  
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Թառգմանիչ՝ Վահան Խաչվանքյան  
Խմբագիր՝ Հերիքնազ Հարությունյան  
Ձեռավորող՝ Համիկ Մայիլյան

Ինտերնյուսը շնորհակալություն է հայտնում Իրակլի Ղլոնտիին սույն  
ձեռնարկը թառգմանելու եւ հրատարակելու իրավունքը տրամադրելու  
համար

ԻՆՏԵՐՆՅՈՒՄ